

### Արձանագրություն թիվ 3

Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի արտահերթ նիստի, կայացած սեպտեմբերի 30-ին

Օրակարգում

1. Թեմատիկ ֆինանսավորմամբ թեմաների հաշվետվության հաստատում
- 2, Ատենախոսության վերնագրի և ղեկավարի հաստատում
- 3, Ընթացիկ հարցեր

Գիտխորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան – Հարգելի գործընկերներ այսօրվա արտահերթ գիտխորհուրդը պայմանավորված է թեմաների հաշվետվությունների, ատենախոսության վերնագրի և ղեկավարի հաստատմամբ, և ունենք ընթացիկ հարցեր: Քվորումը ապահովված է 16 անդամներից ներկա են 13-ը: Ուսանողական մասից ունենք 2 բացակա՝ դա պայմանավորված է 1. ՈՒԳԸ նախագահի հրաժարականով և 2. մյուս անդամի հրաժարականով: Պրոֆեսորադասախոսական կազմից բացակայում է Ն.Ա.Դուրգարյանը՝ նա գործուղման է:

Ֆակուլտետում ունենք 5 թեմատիկ ֆինանսավորվող աշխատանքներ, որնց ամբողջական փաթեթը ներկայացված է հաշվետվությունները լսվել են ամբիոններում, այժմ մենք պետք է հաստատենք այդ թեմաների հաշվետվությունները

1. “ Պրոլինի հենքի վրա 1,2,4-տրիագոլի նոր ածանցյալների սինթեզ և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում” 21T-1D320 ծածկագրով Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման աշխատանքների տարեկան հաշվետվության մասին  
Հաշվետու ժամանակահատվածում ըստ նախատեսված պլանի իրականացվել է օրգանոկատալիզորդների կառուցվածքների և դրանց սինթեզի նախագծման

աշխատանքները: Ստացված արդյունքների հիման վրա իրականացվել է օրգանոկատալիզորդների սինթեզ: ԻՆՇպես նաև իրականացվել է նյութական ռեսուրսների ձեռքբերման գործընթացի կազմակերպում:

Խորհուրդը

**ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է** 21T-1D320 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը V

ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ 21T-1D320 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը Ը  
2. “Ազոլների հենքի վրա ասիմետրիկ օրգանոկատալիզ. Սինթեզ և ակտիվություն”  
21SCG-1D005 ծածկագրով Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների ամրապնդման աջակցության թեմատիկ ֆինանսավորմամբ թեմայի իրականացման ընթացիկ հաշվետվության մասին

Հաշվետու ժամանակահատվածում ըստ նախատեսված պլանի իրականացվել է նյութական ռեսուրսների ձեռքբերման և լաբորատորիայի կապիտալ վերանորոգման գործընթացի կազմակերպում: Ըստ նախատեսված պլանի՝ իրականացվել է օրգանոկատալիզորդների կառուցվածքների և դրանց սինթեզի նախագծման աշխատանքները: Ստացված արդյունքների հիման վրա իրականացվել է օրգանոկատալիզորդների սինթեզ:

Խորհուրդը

**ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է** 21SCG-1D005 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը V

ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ 21SCG-1D005 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը  
3. “ Կենսաբանական նշանակություն ունեցող միացությունների մոլեկուլային փոխազդեցությունները և քիմիական փոխարկումները հեղուկ միջավայրում և միցելային համակարգերում” 21T-1D026 ծածկագրով Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման աշխատանքների ընթացիկ հաշվետվության մասին

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ջրային և ջուր-օրգանական միջավայրում մեթիլենային կապույտի և ԴՆԹ-ի միջև տեղի ունեցող փոխազդեցության վրա ԴՄՍՕ և ԴԷՍՕ-ի ազդեցությունը ֆլուորեսցենցիայի մարման և ֆլուորեսցենցիայի բևեռացման մեթոդով: Բացահայտվել է լուծիչների առկայությամբ ԴՆԹ-ին ՄԿ-ի կապման մեխանիզմները և գերակշռող փոխազդեցության տեսակը: Իրականացվել է  $\gamma$ - հիդրօքսիթթուների հիդրազիդների լուծույթների ուսումնասիրման դինամիկ լուսացրման մեթոդով :

Խորհուրդը

**ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է** 21T-1D026 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը

ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ 21T-1D026 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը

4. “Պոլիֆենոլ-դիալկիլսուլֆօքսիդ համակարգերի հակաօքսիդիչ և ճառագայթապաշտպանիչ հատկությունների ուսումնասիրությունը” 21T-1D245 ծածկագրով Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման աշխատանքների ընթացիկ հաշվետվության մասին

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է գալաթթվի և ցուլի շիճուկային ալբումինի հակաօքսիդանտային հատկությունները դիֆենիլ-պիկրիլ-հիդրազիլ կայուն ռադիկալի նկատմամբ: Որոշվել է կայուն ռադիկալի որսումը, հակաօքսիդիչի արդյունավետ կոնցենտրացիան, հակաօքսիդիչի նվազեցման հզորության ուժը, ստեխիոմետրիան և նվազեցման թիվը էլեկտրոնային կլանման սպեկտրաչափական եղանակով: Որոշվել է ռեակցիայի արագության հաստատունի արժեքը ըստ երկրորդ կարգի ռեակցիաների կինետիկական օրինաչափությունների:

Խորհուրդը

**ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է** 21T-1D245 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը

ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ 21T-1D245 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը

4. “Տարբեր հարաբերակցությամբ, տեղակալված և ոչ տեղակալված խինոնոդիմինայի և արիլամինային խմբեր պարունակող պոլիմերների սինթեզը և

ուսումնասիրությունը ” 21T-1D329 ծածկագրով Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման աշխատանքների ընթացիկ հաշվետվության մասին

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է համապոլիկոնդենսման մեթոդի մշակում: օ-Անիզիդինի հետ պ-պարաֆենիլենդիամինի և բենզիդին համապոլիկոնդենսման արդյունքում ստացվել է անհրաժեշտ համապոլիմերը: Ստացված բոլոր միացությունները դոպացվել են թթուներով: Ցույց է տրվել, որ պ-ֆենիլենդիամին-օ-անիզիդին համապոլիմերների դեպքում էլեկտրահաղորդականությունը բարձրացել է 10-2 Ս/սմ, իսկ բենզիդին-օ-անիզիդինի դեպքում՝ 10-3Ս/սմ: Իրականացվել է նաև պ-ֆենիլենդիամինի ջերմային պոլիմերումը և ցույց է տրվել, որ ռեակցիայի արդյունքում ստացվում են պոլիանիլինի նման կոուցվածքով միացություններ: Ստացված պոլիմերները յոդով դոպացնելիս ցուցաբերում են կիսահաղորդիչ հատկություններ: :

Խորհուրդը

**ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է** 21T-1D329 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը

**ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ** 21T-1D329 գիտական թեմայի հետագա ֆինանսավորումը

Տ.Վ.Ղուչիկյան , - Օրակարգի երկրորդ կետը ատենախոսության վերնագրի և ղեկավարի հաստատում : Օրգանական քիմիայի ամբիոնի ասպիրանտ Տիգրան Եզանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղուչիկյանը հաղորդեց, որ Տիգրան Եզանյանը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Ամբիոնը քննարկել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկում է հաստատել “Ազոլների հենքի վրա նոր ասիմետրիկ օրգանոկատալիզորդների սինթեզ և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում” թեման Բ.00.03 “Օրգանական քիմիա” մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար քիմ. գիտ.թեկ., դոցենտ Արմեն Սուրենի Գալստյանին:

Որոշեցին – Ասպիրանտ Տիգրան Հայկի Եզանյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման հաստատել “Ազոլների հենքի վրա նոր ասիմետրիկ օրգանոկատալիզորդների սինթեզ և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում” Բ.00.03 “Օրգանական քիմիա” մասնագիտությամբ,, իսկ գիտական ղեկավար՝ քիմ. գիտ.թեկնածու,դոցենտ Արմեն Սուրենի Գալստյանին:

Օրակարգի ընթացիկ հարցերից է

1. Տարվա լավագույն ուսանողի մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել քիմիայի ֆակուլտետի երկու ուսանողներ, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Շուշաննա Վանիկի Վարդանյանը և բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Նիկողոսյանը: Այս երկու ուսանողներն էլ մեր ֆակուլտետի այս տարվա անվանական կրթաթոշակառուներն են:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետի “Քիմիա” բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի՝ Հասմիկ Հակոբի Նիկողոսյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի ղեկանի տեղակալ՝ ք.գ.թ.,ասիստենտ. Ա.Ս.Գալստյանը, ք.գ.դ.,պրոֆ. Տ.Վ.Ղուչիկյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Հ. Նիկողոսյանը համալսարանի բակալավրիատի ուսման գերազանցիկ է, ակտիվ մասնակցություն ունի ֆակուլտետի գիտական և հասարակական կյանքին: Ելույթ ունեցողների առաջարկությունը պաշտպանեցին նաև դոցենտ, Ա.Բ.Մարտիրոսյանը և պրոֆ. Կ. Ռ. Գրիգորյանը:

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Հասմիկ Հակոբի Նիկողոսյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետի “Քիմիա” բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող՝ Շուշաննա Վանիկի Վարդանյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ս.Վ.Ղոչիկյանը, դեկանի տեղակալ՝ ք.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գալստյանը, ք.գ.թ., դոցենտ Լ.Ս.Գաբրիելյանը :

Ելույթ ունեցողները նշեցին, որ Շուշաննա Վարդանյանը քիմիայի ֆակուլտետի ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ակտիվ մասնակցություն ունի ֆակուլտետի գիտական և հասարակական կյանքին: Ավարտական աշխատանքը իրականացրել է ԲՄՄ քիմիայի լաբորատորիայում, իր գիտական գործունեության արդյունքները հրատարակել է 6 միջազգային թեզիսի տեսքով: 2017-2020թթ ԵՊՀ, Քիմիայի ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ, և Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ: 2022թ-ից աշխատում է Օրգանական քիմիայի ամբիոնում, որպես կրտսեր գիտաշխատող:

Ելույթ ունեցողների առաջարկությունը պաշտպանեցին նաև դոցենտ Ի.Լ.Ալեքսանյանը և պրոֆ. Կ. Ռ. Գրիգորյանը:

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Շուշաննա Վանիկի Վարդանյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների մրցույթին մասնակցելու համար:

Նիստի նախագահ, պրոֆեսոր

Ս.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան

